



# ՍՈՒՐԲ ՉԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

ԽԱԶՎԵՐԱՅԻՆ ԵՏՔ Եօթներորդ Կրրակի  
05 ՆՈՅԵՄԲԵՐ 2023

## ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒ ԳԻՐՔԻՆ (22.15-25)

**Այսպէս կ'ըսէ Տէրը, Երկնային  
Զօրքերու Տէրը.**

«Գնա՝ արքունի հազարապետ  
Սոմնասի դիւանը մտիր եւ ըսէ իրեն.-  
ինչո՞ւ հոս եկած ես, ի՞նչ գործ ունիս  
հոս, որ այստեղ քեզի գերեզման փորել  
կու տաս, այս բարձունքին վրայ քեզի  
ժայռափոր դամբարան կը շինես։ Լսէ՛,  
ո՛վ մարդ, Երկնաւոր Զօրքերու Տէրը քեզ  
հողկէ պիտի հանէ եւ քաշկոտելով դուրս  
նետէ. քեզ մեծ եւ անսահման Երկիր  
մը պիտի նետէ եւ հոն պիտի մեռնիս։  
Քու գեղեցիկ կառքդ անարգանքի  
առարկայ պիտի ըլլայ եւ իշխանական  
տունդ՝ ոտքի կոխան։ Աստուած քեզ  
քու պաշտօնէդ եւ քու դիրքէդ պիտի  
հեռացնէ։ Այն օրը պիտի կանչեմ իմ  
ծառաս, Քեղկիայի որդի Եղիակիմը, եւ  
քու պատմուճանդ անոր պիտի հազցնեմ,  
անոր պիտի տամ քու իշխանական  
պսակդ, եւ անոր պիտի յանձնեմ  
արքունի հազարապետութիւնը,  
որպէսզի հօր մը պէս կառավարէ  
Երուսաղէմի եւ Յուղայի բնակիչները։  
Դաւիթի տան վերակացութիւնը անոր  
պիտի տամ. պիտի իշխէ, եւ ո՛չ ոք  
պիտի ընդդիմանայ անոր։ Իր վճիռները  
բացարձակ պիտի ըլլան. ո՛չ ոք պիտի

կարենայ փակել ինչ որ ինք կը բանայ,  
եւ ո՛չ ոք պիտի կարենայ բանալ ինչ  
որ ինք կը փակէ։ Զայն իշխան պիտի  
կարգեմ եւ ամրօրէն հաստատեմ պատին  
ամրացուած գամի մը պէս, եւ անիկա իր  
Հօրը տան փառքը պիտի ըլլայ։ Իր Հօրը  
տան մէջ դիրք ունեցող բոլոր մարդիկը,  
փոքրէն մինչեւ մեծ իրենց յոյսը անոր  
վրայ պիտի դնեն եւ իրմէ կախուած  
պիտի ըլլան։ Եւ ինչպէս երբ տան մը  
բոլոր անօթները, փոքր ամաններէն  
մինչեւ մեծ կաթսաները մէկ գամէ  
կախուին՝ գամը կը խախտի ու կ'իյնայ,  
այնպէս ալ, - կ'ըսէ Երկնաւոր Զօրքերու  
Տէրը, - գամի մը պէս հաստատուած  
Եղիակիմն ալ պիտի շարժի, պիտի իյնայ  
ու կործանի, եւ անոր փառքը պիտի  
կորսուի»։ Տիրոջ վճիռն է ասիկա։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ  
ՆԱՄԱԿԻՆ  
(1.1-14)

**Ե**ս, Պօղոս, Աստուծոյ կամքով  
Յիսուս Քրիստոսի առաքեալը, կը  
գրեմ Եփեսոս բնակող Եղբայրներուդ,  
Յիսուս Քրիստոսի հաւատացողներուդ։  
Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս  
Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն  
պարգեւեն ձեզի։

Օրհնեալ է Աստուած, մեր Տիրոջ

Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստո-  
սով մեզ օրհնեց Երկինքի մէջ ամէն  
տեսակի հոգեւոր օրհնութեամբ։ Անիկա  
աշխարհի գոյութենէն իսկ առաջ մեզ  
ընտրած էր՝ Քրիստոսի միջոցաւ իրեն  
պատկանելու համար որպէս սուրբ եւ<sup>1</sup>  
անարատ ժողովուրդ, եւ իր սիրով մեզ  
նախասահմանեց Յիսուս Քրիստոսի  
ձեռքով իր որդիները ըլլալու, որովհետեւ  
այդ էր իր կամքը եւ ծրագիրը։

Ուստի գովենք զինք այն փառքին  
համար որ մեզի չնորհեց իր սիրելի  
Որդիին միջոցաւ։ Արդարեւ, անո՞վ  
փրկուեցանք եւ անոր արիւնով մեր  
մեղքերուն թողութիւն գտանք։ Ո՛րքան  
մեծ է իր շնորհքը որ առատօրէն տուաւ  
մեզի՝ ամենայն իմաստութեամբ եւ  
գիտութեամբ։ Որովհետեւ իր կամքին  
համաձայն մեզի յայտնեց շատ  
կանուխէն պատրաստած իր ծրագիրը, որ  
Քրիստոսով պիտի իրագործուի։ Եւ այդ  
ծրագիրը սա է, որ երբ ժամանակները  
իրենց լրումին հասնին, Քրիստոս իրմով  
պիտի բովանդակէ ամէն ինչ որ կայ  
երկինքի մէջ եւ երկրի վրայ։

Աստուած, որ Քրիստոսով ամէն ինչ  
կը յաջողեցնէ ըստ իր առաջադրած  
ծրագրին եւ կամքին, առաջուց հրաւիրեց  
մեզ՝ իր ժողովուրդը ըլլալու եւ իր  
փառքը գովերգելու։

մենք, որ Քրիստոսի  
յուսացողներէն եղանք։  
Դուք ալ, երբ լսեցիք  
ճշմարիտ քարո-  
զութիւնը, այսինքն  
Աւետարանը որ

...Երբ լսեցիք  
... Աւետարանը  
որ ձեզի  
փրկութիւն  
բերաւ,  
հաւատացիք  
Քրիստոսի եւ  
խոստացուած  
Սուրբ Հոգիով  
կնիվեցաք։

ձեզի փրկութիւն բերաւ, հաւատացիք  
Քրիստոսի եւ խոստացուած Սուրբ  
Հոգիով կնքուեցաք։ Եւ Սուրբ Հոգին  
գրաւական է՝ թէ պիտի ժառանգենք  
Աստուծոյ խոստումը, եւ որպէս իր  
կողմէ փրկուած ժողովուրդ՝ իր փառքը  
գովերգենք։

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԻՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(8.17-21)

**Մ**եր Տէր Յիսուս  
Քրիստոս կ'ըսէ.

«Զկայ ծածուկ բան  
մը որ չյայտնուի եւ  
կամ գաղտնի բան մը՝  
որ չգիտցուի եւ երեւան  
չգայ։ Ուրեմն ուշագիր  
եղէք թէ ի'նչպէս կ'ըն-  
դունիք այս խօսքերը, որովհետեւ  
ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողէն  
պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը  
կարծէ թէ ունի»։

...ունեցողին  
պիտի  
տրուի, իսկ  
չունեցողէն  
պիտի առնուի  
նոյնիսկ այն՝  
ինչ որ կը  
կարծէ թէ  
ունի։

Յիսուսի մայրն ու եղբայրները  
իրեն եկան, բայց խուռն բազմութեան  
պատճառով չկրցան իրեն մօտենալ։  
Լուր տուին իրեն, ըսելով. «Մայրդ եւ  
եղբայրներդ դուրսն են եւ կ'ուզեն քեզ  
տեսնել»։ Յիսուս ըսաւ. «Մայրս ու  
եղբայրներս անոնք են որոնք Աստուծոյ  
խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»։

## Սոյս թերթիւն

շաբաթական շերթականհանար  
եւ-աւագանգ ստանալու շաբար գրեթե  
eglige@sourphagop.net եւ-Հասթերն։